

The Teaching of Saint Gregory, An Early Armenian Catechism Translation and Commentary by Robert W. Thomson (Harvard Armenian Texts and Studies, 3) Cambridge, Massachusetts, 1970.

Վարդապետություն Ա. Գրիգորի, Մի վաղ հայկական վարդապետարան, բարգմանություն և ծանոթություններ Ռոբերտ Վ. Թոմսոնի («Հարվարդի հայկական բնագրեր և ուսումնասիրություններ», 3) Փենսիլվանիա, Մասաչուսեթս, 1970:

Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը» ամենից շատ օտար լեզուների թարգմանված երկերից է, բայց նրա կազմում գտնվող, սակայն ինքնուրույն բովանդակություն ունեցող Վարդապետությունը ցարդ ամբողջովին չէր թարգմանված դեռ ոչ մի լեզվի և ընդհանրապես բիշ էր ուսումնասիրված:

Այսօր մեր առջև է Ազաթանգեղոսի Վարդապետության առաջին ամբողջական թարգմանությունը (անգլերեն) իր համապատասխան ուսումնասիրությամբ՝ կատարված Հարվարդի (ԱՄՆ) համալսարանի գրաբարի և հայագիտության դասախոս Ռ. Թոմսոնի ձեռքով:

Վարդապետությունը համեմատաբար մանրամասն քննարկման նյութ է դարձել Բ. Սարգիսյանի հայտնի աշխատության մեջ¹: Այլոց նման նա ևս չի ընդունում այն կարծիքը, թե Վարդապետության հեղինակը կարող էր Գրիգոր Լուսավորիչը եղած լինել: Վարդապետությունը մեզ հասած վիճակում դրվել է V դարում: Հեղինակը այն շարադրելիս հետևել է Աստվածաշնչին և, բացի դրանից, իր երկը համեմել եկեղեցու հայրերի գործերով: Որպես Վարդապետության հեղինակ, Բ. Սարգիսյանն ընդունում է Մեսրոպ Մաշտոցին: Այս տեսակետը, որը հենվում է Կորյունի այն տեղեկության վրա, թե Մեսրոպ Մաշտոցը հորինել է «ճառք յաճախագոյնք», պաշտպանել են նաև ուրիշները, իսկ նորերից նույնը կրկնել է Ն. Ակինյանը²:

Իր առաջարկումով Ռ. Թոմսոնը Վարդապետության (ինչպես նաև ամբողջ Ազաթանգեղոսի պատմության) հեղինակի հարցում այն կարծիքին է, որ դա պետք է լիներ Սահակի և Մեսրոպի աշակերտներից մեկը, որը քաջ ծանոթ էր ոչ միայն Կորյունի, այլև Եզնիկ Կողբացու երկերին:

Առաջարանի մի զղալի մասը (19 էջ) հատկացված է Վարդապետության բառապաշարի քննությանը, ընդ որում նկատի է առնված բառիսաստը իր փիլիսոփայական ու դավանարա-

նական տարբեր նրբերանգներով: Սա մի լուրջ վերլուծություն է, որն անհրաժեշտ է նման աշխատությունների մեջ: Այստեղ Ռ. Թոմսոնը զուգահեռներ է նշում Վարդապետության (բառապաշարի ու բովանդակության) և Եզնիկ Կողբացու ու Հաճախապատմի միջև:

Վարդապետության հեղինակն իր ազդյուններից նշում է միայն Աստվածաշունչը, սակայն իրականում, ինչպես գտնում է Ռ. Թոմսոնը, նա քաջ ծանոթ է եղել հույն եկեղեցական հայրերի: (Կյուրեղ Նրուսադեմացու, Բարսեղ Կեսարացու և Հովհան Ոսկեբերանի) մատենագրությունը և օգտագործել է դրանք:

Թեև Ազաթանգեղոսի միջնադարյան թարգմանությունների մեջ Վարդապետությունը բաց է թողնվել, այսուհանդերձ, այն հակիրճ ձևով մի քանի լեզվի է թարգմանվել: Վարդապետությունը նախորդող և հաջորդող պարբերություններում ազդարարվում է, թե սկսվում կամ վերջանում է Վարդապետության բաժինը և այս բանը անփոփոխ պահպանվում է հունարեն, արաբերեն և այլ լեզուներով կատարված թարգմանությունների մեջ: Բացի սրանից, ինչպես իր առաջաբանում նշում է Ռ. Թոմսոնը, կան համառոտ թարգմանություններ այլ լեզուներով: Ազաթանգեղոսի այն համառոտ հունարեն թարգմանությունը, որը գտնվել է Օբրիդայի ձեռագրի մեջ (նոր հայտնաբերված), ունի Վարդապետության երեք պարբերությունների թարգմանությունը (652—654). սրանցից երկուսի թարգմանությունը գտնում ենք նաև Ազաթանգեղոսի երկրորդ խմբագրության (Վարդ Կոչեցյալ) առաջերին թարգմանության մեջ (Ն. Մառի Կողմից հայտնաբերված): Հայտնի է նաև պրոֆ. Ժ. Դարիթի կողմից հրատարակված վրացերեն մի ձեռագիր, որը Վարդապետության որոշ մասերի վերամշակված թարգմանությունն է:

Ռ. Թոմսոնի գրքի հիմնական մասն է կազմում Վարդապետության գրաբար բնագրի անգլերեն թարգմանությունը: Հայերեն բնագրի հրատարակիչները միշտ էլ ձգտել են Ազաթանգեղոսի ամբողջ պատմությունը բաժանել թե՛ հատվածների, թե՛ պարբերությունների: Դեռ 1822 թ. վենետիկյան հրատարակության մեջ գիրքը բաժանված էր 151 հատվածների, իսկ 1835 թ. հրատարակությունը ունի նոր բաժա-

1 Բ. Սարգիսյան, Ազաթանգեղոս և յուր թարգմադարյան գաղտնիքն, Վենետիկ, 1890, էջ 359—408:

2 Ն. Ակինյան, Մաշտոց վարդապետ Հացեկացի, «Հանդես Ամսօրյա», 1935, էջ 544—545:

նում՝ 127 հատված, որն անփոփոխ պահպանված է նաև հաջորդ հրատարակություններում, մանավանդ, 1909 թ. քննական հրատարակության մեջ: Վերջինիս հրատարակիչները (Բ. Տեր-Մկրտչյան և Ս. Կանայանց), բացի 127 հատվածից, ամբողջ բնագիրը բաժանել են 900 պարբերության, ընդ որում Վարդապետությունն ուներ 76 հատված (ԻԳ—ՂԹ) և 457 (259—716) պարբերություն: Ռ. Թոմսոնը նույնությամբ պահպանում է պարբերությունների բաժանումները և իր թարգմանությունը համարակալում է ըստ հայկական բնագրի պարբերությունների, սակայն հատվածների բաժանումը փոխել է և բաժանել 54 հատվածի, որոնք նա վերնագրել է, օգտվելով քննական հրատարակության մեջ եղած (բովանդակության ցուցակում) հատվածների վերնագրերից:

Թարգմանության մեջ Ռ. Թոմսոնը բարեխիղճ է և ուշադիր: Վարդապետության բառապաշարի նրա ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թարգմանիչը ամեն կերպ ձգտում է բնագրի ոգին ըմբռնել: Այն պարբերություններից հետո, որոնց բովանդակությունը կապ ունի հույն մատենագիրների երկերի հետ, դրված են վերջիններից քաղած համապատասխան նախադասությունները հենց հունարեն բնագրով: Ի դեպ, անմիջապես պարբերություններից հետո են դրված նաև բոլոր ծանոթությունները:

IV դարում հայ եկեղեցու նստավայրի հարցում Ռ. Թոմսոնը հետևել է Հ. Գեղեցիկի այն տեսակետին, թե Վաղարշապատը կաթողիկոսական նստավայր դարձավ միայն V դարում, իսկ նախորդ դարում նստավայր էր Աշտիշատը: Հ. Գեղեցիկը գրում է. «Դ գարուն մեջ Վաղարշապատ չէր Հայաստանի հոգևոր մայրաքաղաքը, այլ Տարոնո Աշտիշատ քաղաքը՝ հարավային Հայաստանի մեջ»³:

Վերջերս էջմիածնի Մայր տաճարի և Ս. Հռիփսիմե եկեղեցու վերանորոգման առթիվ կատարված պեղումները շատ բան բացահայտեցին Վաղարշապատի հնագույն եկեղեցիների մասին: Ա. Սահինյանը եկավ այն եզրակացության, որ էջմիածնի Մայր տաճարը Տրդատ Գ-ի ժամանակ իր նախնական ձևով եղել է բազի-

լիկային կառուցվածք: Պեղումների նյութերը հաստատում են Ագաթանգեղոսի ու Ղազար Փարպեցու վկայությունների ճշմարտացիությունը այն հարցում, թե Վաղարշապատը եղել է Հայոց կաթողիկոսների առաջին նստավայրը և այնտեղ հենց Տրդատ Գ-ի ժամանակ եկեղեցիներ են կառուցվել:

Այս առթիվ անհրաժեշտ է նաև ընդգծել այն կարևոր պարագան, որ կաթողիկոսական նստավայրերը ավելի հաճախ քաղաքական մայրաքաղաքում կամ նրա կողքին են եղել ոչ միայն հայկական անկախ պետականության, այլև օտար տիրապետության ժամանակ (Դվինը մարզպանական և արաբական շրջաններում), ուստի ավելի տրամաբանական է, որ կաթողիկոսական նստավայրը մայրաքաղաք Վաղարշապատում լիներ, քան հեռավոր Աշտիշատում: Դեռ չենք խոսում այն մասին, որ հունական կողմնորոշում ունեցող Լուսավորչի տոհմի կաթողիկոսները հազիվ թե համաձայնեին նստել Աշտիշատում, ուր գերիշխում էր հակառակորդ (ասորական) ուղղությունը:

Ռ. Թոմսոնը հայտնի է իր հայագիտական ուսումնասիրություններով՝ հրատարակված տարբեր ամսագրերում: Նա հոգվածներով հանդես է եկել Փարիզում հրատարակվող «Հայկական ուսմանց հանդեսի»⁴ և Զ (վերջին տարիների հայագիտական հոգվածների մատենագիտությունը) համարներում, ինչպես նաև Վենետիկում լույս տեսած «Հայկական» ժողովածուի էջերում (Վարդապետության լեզվի մասին)⁵:

Այժմ Ռ. Թոմսոնը ներկայանում է հայագիտության համար շատ արժեքավոր մի աշխատությամբ, որով նա միջազգային գիտական հասարակայնությանն է ներկայացնում հայ ոսկեդարյան մատենագրության դասական երկերից մեկը:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

⁴ Ա. Սահինյան, էջմիածնի Մայր տաճարի սկզբնական տեսքը, «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 3, էջ 71—93:

⁵ R. W. Thomson, The shorter recension of the Root of Faith, REA, V, 1968, էջ 249—261:

⁶ R. W. Thomson, Early armenian catechitcal instruction, Armentaca, Venise 1969, էջ 98—108:

³ Հ. Գեղեցիկ, Փափստոս Բյուզանդ կամ Հայկական եկեղեցվո սկզբնավորություն, Վենետիկ, 1896, էջ 58: